ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11.02.2022թ.
ժամը 10 [45]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՀՋ և Հ վարչության պլանավորման և հաշվառման բաժնի պետ, գնդապետ Գ. Գևորգյան,
ՀՀ ՋՈՒ ՀՋ և Հ վարչության պլանավորման և հաշվառման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ն. Չախալյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ներսիսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Ներսիսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին, համապատասխան կազմած լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս. Ներսիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների մատակարարման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ
2	«Միկրոորինգ» ՍՊԸ
3	«Հարություն Օհանյան Կարենի» ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս. Ներսիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են բացառությամբ՝ «Հարություն Օհանյան Կարենի» ԱՁ –ի: Չնայած armeps համակարգով հայտ է ներկայացրել «Հարություն Օհանյան Կարենի» ԱՁ-ն, սակայն վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, նշված է «ԼԱՁԵՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ» ՓԲԸ, ուստի գնահատող հանձնաժողովը «Հարություն Օհանյան Կարենի» ԱՁ –ի կողմից ներկայացված հայտը գնահատելու հնարավորություն չունի: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Հարություն Օհանյան Կարենի» ԱՁ -ի հայտը:

2.3 «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող իր կողմից հաստատված դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, իրական շահառուների մասին տվյալները և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը:

2.4 «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում մարտկոցի տրամագիրծը նշված է 341.5մմ, այն ինչ, հրավերով պահանջվում է 34±1,5մմ:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 11.02.2022թ. որոշեց կասեցնել նիստը ու առաջարկել «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ին և «Միկրորինգ» ՍՊԸ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, շտկել անհամապատասխանությունները: 15.02.2022թ. շարունակելով նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ս. Ներսիսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակիցներ.

Հ/հ	Ապրանքի անվանումը	չ/մ	Քանակը	Նախահաշ վ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Մարտկոց՝ 6Վ4(5)Ա/ժ (կուտակիչ մարտկոց 6Վ)	հատ	280	1 708 000	«Միկրորինգ» ՍՊԸ	1 204 000	240 800	1 444 800
2	Մնուցման մարտկոց (կուտակիչ մարտկոց)	հատ	200	5 800 000	«ՄԱԺԵՎ» ՍՊԸ	4 497 500	899 500	5 397 000

3.2 Մասնակցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 18.02.2022թ. ժամը 10:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ: Նախատեսված բանակցություններին «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ն և «Միկրորինգ» ՍՊԸ-ն չներկայացան, արդյունքում վերջիններիս կողմից առաջարկված գները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ս. Ներսիսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 21.02.2022թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Միկրորինգ» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է հինգօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Ներսիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Գ.Գևորգյան
Գնահատող	Ա. Պետրոսյան
Գնահատող	Ն. Չախալյան
Գնումները համակարգող՝	Ս.Ներսիսյան